ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Համգործակցային մեթոդների կիրառում կրտսեր դպրոցում,որպես ընթերցանության,խնդիրների լուծման խթանող միջոց

Անցկացման վայր՝ Վարդենիս
Աշխատանքի Ղեկավար՝ Հասմիկ Բեյբության
Ուսուցիչ՝ Մեհուհի Համբարձումյան Գառնիկի
Առարկա՝ Դասվար
Դպրոց՝ Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց

Վարդենիս **2023**

Բովանդակություն

1.	Ներածություն	**3**
2.	Գրական–ակնարկ	**4**
3.	Գործնական համատեքստ	**9**
4.	Փորձարարական դաս**1**	**9**
5.	Փորձարարական դաս **2**	**12**
6.	Վերլուծություն **1**	**14**
7.	Վերլուծություն **2**	**14**
8.	Հետազոտության ընթացքը	**15**
9.	Եզրակացություն	**16**
10.	Գրականություն	**17**
11.	Դասի պլան**1**	**18**
12.	Դասի պլան **2**	**21**

Ներածություն

«Ընթերցանությունը գիտելիքների դուռերը բացող կախարդական բանալի է»:

Խնդիրները՝

Վերջերս կրտսեր դպրոցականների շրջանում կարծես ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը նվազել է: Կրտսեր դպրոցականները կամ շատ չեն սիրում , կամ սիրում են կարճ տեքստեր կարդալ;Այս պատճառով հետազոտական աշխատանքը ցանկացա իրականացնել՝

«Համագործակցային մեթոդների կիրառումը կրտսեր դպրոցում,որպես ընթերցանությանը խթանող միջոց»թեմայով:

Հետազոտական աշխատանքիս գլխավոր նպատակ է՝

1. Խթանել սովորողների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:
2. Զարգացնել համագործակցային հմտությունները:
3. Զևավորել համեմատելու,իմաստավորելուկարողություն:
4. Զևավորել ստեղծագործելու և անավարտ հոդվածը ինքնուրյուն ավարտին հասցնելու հմտություն:
5. Իր ստեղծած ավարտը համեմատել ընկերների, ապա բնագրի ավարտի հետ:
6. Նպաստել,որ ընթերցանությունը հետագայում դառնա գիտելիքների ձեռքբերման կարևորագույն ևանփխարինելի միջոց:

Գրական ակնարկ

Կրտսեր դպրոցում ընթերցանությունը մայրենիի հիմնական բաժիններից մեկն է:Ընթերցանությունը միտված է՝

1. Աշակերտների մեջ ձևավորել և զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հատկանիշներով:
2. Գործնականորեն սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնելով աշակերտների բառապաշարը,մշակել և զարգացնել երեխաների պատմելուկարողությունները:
3. Աշխարհահանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի, բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին:
4. Իրականացնել երեխաների բարոյական,գեղագիտական դաստիարակության խնդիրները:
5. Տարրական դասարաններում անհրաժեշտ է ընթերցանության հիմքը ամուր, հիմնավոր դնել, որը հետագայում կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևորագույն ևանփոխարինելի միջոց:

Ընթերցանության հիմնական խնդիրը երեխաների մտավոր զարգացումն է, նրանց նոր գիտելիքներ, տեղեկություններ հաղորդելը, որոնք ուղղված են բարձրացնելու երեխայի կրթական մակարդակը, ինչպես նաև աշակերտներին նախապատրաստել հետագայում ուսումնական տաբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրմանն անցնելուն:

Մայրենի լեզվի դասընթացում բնագրի շուրջ կատարվող աշխատանքները ընթերցողական կարողությունների ձևավորման միջոց են:Ուսուցիչը պետք է հասնի նրան, որ յուրաքանչյուր աշակերտ կարդացած ստեղծագործության շուրջ մտորի, վերլուծի գործող անձանց արարքները, մենախոսությունները և երկխոսությունները դատողություններ անի,եզրահանգումների գա,դասեր քաղի ստեղծագործությունից:

Անհրաժեշտ է ուսուցիչը բազմաթիվ հարցեր առաջադրի, օրինակ՝ վերնագիրը ընթերցելուց հետո հարցնի, թե ինչի՞ մասին կարող է լինել տվյալ նյութը, ի՞նչ են հասկանում վերնագրից ևայլն: Նման հարցերի միջոցով հնարավոր է ստեղծել ակտիվ մտածողություն ապահովող միջավայր, որի շնորհիվ սովորողները կփորձեն հասկանալ կարդացածը, մտածել կարդածացի շուրջ:

Պատմելու կարողության ձևավորումը մայրենի լեզվի կարևորագույն փուլերից է: Ընթերցած նյութի բովանդակությունը աշակերտը կարող է ինքնուրույն պատմել միայն այն ժամանակ ,երբ հասկացել է կարդացածը:

Ուսուցանվող յուրաքանչյուր ստեղծագործություն պետք է ամփոփվի: Սովորաբար ամփոփումը իրականացվում է հարցերի միջոցով, որոնք պետք է ընդհանրացնող ,համակարգող լինեն, որպեսզի երեխաներին մղեն պատասխանելիս որոշակի

հմտություններ,մտահանգումներ կատարելու:

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն.

Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու,աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն:Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմառդեմ,խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են ,փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը,ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելուև մտքեր փոխանակելու,կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ,պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ .

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

5 . Խմբային գործընթաց.

Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության

բարելավման հետ կապված խնդիրների ինքնարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը ,որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հետաքրքրությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ:Հանձնարարականների ռազմավարություն հետևյալն է՝

1. Խմբերը ձևակերպում են առաջադրանքը,լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. աշխատանքի արդյունքը,
3. Բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները,տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում ևներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելուժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու,ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբերեն, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ,գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցայինուսուցման մեթոդներ

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեքբանալի ևմեկ կողպեք
5. Հինգ բոպեանոց ազատշարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցմանայս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է,որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների,և՛խմբերին:

Խճանկար**(Ջիգսո,Jigsaw):** Խճանկարը համագործակցային <u>ուսուցման մեթոդ</u> է:Այն մշակվել և փորձարկվել է<u>ՏեխասիA&Mհամալսարանում՝Էլիոթ Արոնսոնի</u> և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են՝

1. Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
2. Աշխատանք փորձագիտական խմբում,
3. Աշխատանք ուսումնական խմբում,
4. Ավարտական աշխատանք,
5. Ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որինպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարելանդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբարմտածելու,ցածրաձայնխոսելու,աշխատանքիարդյունքը

ներկայացնելուհմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով:Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան:Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրածշարադրանք:

Գործնական համատեքստ

Հետազոտությունս անցկացրել եմ Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանում,որովհետև դասավանդում եմ այդ դասարանում:Դասավանդման ընթացքում զգացել եմ աշակերտների հետաքրքրության պակաս ընթերցանության նկատմամբ:Այս խնդրի լուծման համար ես հասկացա, որոշ աշակերտների պետք է մոտիվացնել ընթերցանության դասապրոցեսին, այն վարել տարբեր համագործակցային մեթոդներով և ՏՀՏ գործիքներով: Այսպիսով աշակերտների հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ:

Փորձարարական դաս**1**

Դասարան 2-րդ

Թեմա՝

«Անբան Հուտին»հեքիաթի ավարտից հետո ասվում է թեմայի ամփոփում

«Երկնքից ընկավ երեք խնձոր»բացատրությունը

Դասի նպատակները՝ Աշակերտները՝

կվերհիշեն ժողովրդական բանահյուսության տարրերը,

Կհարստացնեն մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով,

Ձեռք կբերեն տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ,

Կկարողանան գործնականում տարբերակել իրապատում, հրաշապատում և կենդանական հեքիաթները,

Կկառուցեն նկարագրական գեղեցիկ խոսք,

Կսովորեն գնահատել սեփական և ուրիշների արարքները,

Բացահայտել հերոսների բնավորությունների բնորոշ գծերը:

Մեթոդները՝մտագրոհ,խմբավորում,համագործակցում,ԽԻԿ

Դասաժամին անհրաժեշտ դիդակտիկ նյութեր՝ գրողների,հեքիաթագիրների մեծադիր նկարները,հեքիաթներից դրվագներ: Դասի ընթացքը՝

<u>Խթանում 10ր</u> Հնչում է երաժշտություն,անտառային ձայներ:

Այսօրվա մեր դասը կսկսենք «Հրաշքների դաշտ» խաղով: Ես ձեզ հարցեր կտամ ևպատասխանների առաջին տառերի միջոցով կգտնեք թաքնված բառը:

Հեքիաթի որ հերոսն է անբան, աշխատել չի սիրում և ամբողջ օրը նստած մաստակ է ծամում:

Հուդին

Այն ինչն է,որ քնած ժամանակ ենք տեսնում: Երազ

Անհաղթ հերոս,ո՞վ մին զարկում է,ջարդում է հազար:

Քաջնազար:

Վինի Թուխի ընկեր իշուկի անունը:

Իա:

Անդերսենի հեքիաթի հերոսներից,որ մեծանում և դառնում է գեղեցիկ կարապ:

Անճոռնի ճուտիկը:

Սպիտակաձյունիկի յոթ ընկերները:

Թզուկները:

հ	է	ք	ի	ա	թ

Հիշեք,թե ինչ բառերով են սկսվում հեքիաթները:

Լինում է չի լինում,ժուկով ժամանակով…

Ի՞նչ բառերով են ավարտվում: Իմաստի ընկալում **20**ր

Այս երեխաներ հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը: Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններից է:Այն եկել է դարերի խորքից:Ժողովրդի ծոցից դուրս են եկել բազմաթիվ հեքիաթներ և փոխանցվել սերնդեսերունդ:Հեքիաթներն ամփոփում են ժողովրդի երազանքները ու ցանկությունը: Այն, ինչ հնարավոր չէ իրական կյանքում, մարդիկ դրանք կատարում են հեքիաթներում: Հեքիաթները ծնվել են ժողովրդի ծոցից: Ավելի ուշ հեղինակները

մշակել են այդ հեքիաթները, նաև գրել են ինքնուրույն հեքիաթներ:Եվ նրանց անվանելեն հեքիաթագիրներ:

Եվ հեքիաթներում միշտով է հաղթում բարին:

«Երկնքից ընկավ երեք խնձոր» բաժնում մենք ծանոթացանք, կարդացինք հեքիաթներ և ձեզ դուր եկած հեքիաթներից եկեք լսենք «ՈսկուԿարասը» հեքիաթը: Ոսկու Կարասը հեքիաթը առաջին անգամ ամբողջությամբ կարդում եմ: Երկրորդ անգամ կարդում եմ հեքիաթը մինչև «ոսկով լի կարասի հողից դուրս գալը»մասը: Ապա երեխաներին բաժանում երկու խմբի և պահանջում եմ հեքիաթը ավարտին հասցնել իրենց տարբերակով: Ապա այդ տարբերակները համեմատում բնագրի ավարտի հետ:Այսպիսով աշակերտները համեմատում ուգնահատում են իրենց ստեղծագործած աշխատանքը:

Անդրադարձ **5-7**ր

Բնավորությունս–բարի Վախենում եմ – չարի,

Ազգականներ-սառակ,առած,պատմվածք Սիրում եմ - ընթերցասեր երեխաների Կարիք ունեմ-ընթերցելու

Փորձարարական դաս**2**

ՏՀՏ կիրառմամբ

Առարկա-մաթեմատիկա

Դասարան – 2-րդ

Թեմա

Գիտելիքների ամրապնդում:Գործողությունների կատարման կարգը

Բնույթը՝

Ամփոփման դաս

Նպատակը

Ամրապնդել թվերի գումարման, հանման, բազմապատկման և բաժանման առկայությամբ արտահայտությունների արժեքները գտնելու հաշվեկանոնները, հերթականությունը,գործողությունների կատարման կարգը, դրանց բաղադրիչների անվանումները:

Զևավորել հաշվողական հմտություններ և խնդիրներ լուծելուկարողություններ:

Զարգացնել աշակերտների տրամաբանական մտածողությունը , խմբում համագործակցելու, խնդիրները ճիշտ ,հասկանալով ընթերցելու կարողություններ:

ՈԻսումնական ակնկալվող արդյունքներ

Գիտենալ գործողությունների կատարման հերթականությունը և հաշվեկանոնները:

Կարողանալ այն կիրառել վարժությունների և խնդիրների լուծման ժամանակ:

Կահավորումը՝

Համակարգիչ,պրոյեկտոր,մեծ էկրան,քարտեր առաջադրանքների կատարման համար:

Ընթացքը՝

Բանավոր հաշիվ 5ր

Խմբային աշխատանքներ 25ր՝ Վարժություններ ,խնդիրների լուծում

Դասի ամփոփում և գնահատում 10ր

Տնային աշխատանքի հանձնարարում 5ր

Խմբայինաշխատանք

Վարժություններ

Նյութի ամրապնդումն ուղեկցվում է սլայդների ցուցադրմամբ:Տրված է արտահայտություն, պետք է նշել լուծման հերթականությունը,գտնել արժեքը և սահմանումը.

30+6x2= 40:2x5= 53-8:2=

Հաջորդ սլայդում ցույց է տրվում լուծման եղանակը ըստ հաշվեկանոնի: Այնուհետև խմբերին բաժանվում են քարտեր,որոնց վրա գրված են առաջադրանքներ:

Առաջինն ավարտած խումբը ներկայացնում է աշխատանքը և հաջորդաբար մյուս խմբերը: Էկրանին ցուցադրվում են ճիշտ պատասխանները:

40-15:3= 24-6x2= 9x2+50= 30:3+67=

Խնդիր**1** Մայրիկը գնել է 3 տուփ ձու: Հաշվի՛ր քանի ձու է նա գնել, եթե յուրաքանչյուր տուփում կա12 ձու:

Առաջինն ավարտած խումբը ներկայացնում է խնդրի լուծումն ու պատասխանը և հաջորդաբար մյուս խմբերը:էկրանին ցուցադրվում են ճիշտ պատասխանը: Խնդիր **2**

Հայկն ունի 60 դրամ,որը 2 անգամ շատ է Մարիի ունեցած դրամից, որքան դրամ ունեն Հայկն ուՄարին միասին:

Առաջինն ավարտած խումբը ներկայացնում է խնդրի լուծումն ու պատասխանը և հաջորդաբար մյուս խմբերը:էկրանին ցուցադրվում են ճիշտ պատասխանները:

Դասի ամփոփում և գնահատում

Ամփոփել դասը՝գնահատել ակտիվ,առավել աչքի ընկնող աշակերտներին: Տնային աշխատանքի հանձնարարում.

Վարժ.180ա,191 ա,192

2-ի և3-ի բազմապատկման և բաժանման աղյուսակները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ1

Դասի ուժեղ կողմերը

1Հաջողվեց իմ առջև դրված գրեթե բոլոր նպատակները իրագործել: 2Ապահովված էր բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

3 Բոլորը մասնակցեցին հեքիաթի վերլուծական մասին՝ ինքնավերլուծությանը:

4 ՏՀՏ գործիքի օգտագործմամբ ավելացավ ուսուցանվող նյութի հանդեպ աշակերտների հետաքրքրությունը և ներգրավածությունը:

Թույլ կողմերը 1Համագործակցային աշխատանքի ժամանակ փոքր ինչ աղմուկ էր:

2 Ժամանակը չբավարարեց:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2

Դասի ուժեղ կողմերը

1. Դասը անցավ շատ հետաքրքիր:
2. Խմբերը ձևակերպում էին վարժությունների և խնդիրների պատասխանները և ներկայացնում:
3. Դասը ավելի տեսանելի և հետաքրքիր դարձրեց սահիկաշարից օգտվելը:

Թույլ կողմերը

1. Խմբում աշխատելիս նկատեցի թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների պասիվություն: Չհասցրինք խնդիրների վերլուծումը կատարել ամբողջությամբ:
2. Չհասցրի գնահատել աշակերտներին՝ ժամանակի սղության պատճառով:

Հետազոտության ընթացքը

«Անելու միջոցով սովորելու» գաղափարն առավել քան համահունչ է կրտսեր դպրոցականի մտածողության առանձնահատկություններին, այն առավել դյուրին է դարձնում սովորելու գործընթացը, «ապահովում է սովորողի հանդիպումը իրական կյանքին և խնդիրներին, իրեն հուզող հարցերին»: Ինչն էլ նպաստում է որոշակի հարցերի, երևույթների և իրադարձությունների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների խթանմանը: Երեխան սովորում է գործելու միջոցով սովորել գործնական ճանապարհով լուծել խնդիրները, գտնել հարցերի պատասխանները: Հետազոտական աշխատանք կատարելը նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, գիտելիքները ինքնուրույն կիրառելու, քննադատական մտածողության, հետադարձ հայացքով անդրադարձ կատարելու ունակությունների ձևավորմանը և, ի վերջո, սովորել սովորելու կարողունակության զարգացմանը: «Մայրենի-2» դասագրքում զետեղված հետազոտական փոքրիկ աշխատանքները, առաջադրանքները երեխաներին սովորեցնում են ինքնուրույն կամ խմբով տեղեկություններ և կարծիքներ քաղել առաջադրված խնդրի մասին տարբեր աղբյուրներից (գրականություն, մեծահասակներ, համացանց և այլն) հարցումներ և դիտարկումներ անել, հարցեր նախապատրաստել, փոքրիկ քայլաշար ստեղծել, այդ ամենը գրառել և ներկայացնել: Երկրորդ դասարանում նրանց, իհարկե, օգնում և հարկ եղած դեպքում ուղղորդում են ուսուցիչները ու ծնողները, մեծահասակները:

Եզրակացություն

Մայրենի լեզվի դասի գլխավոր նպատակը երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության հանդեպ սեր արթնացնելը և ընթերցողական կարողության ձևավորումը:Այս ամենի դասավանդումը տարրական դպրոցում իրականացվում է

բացատրական ընթերցանության միջոցով, որը բազմաթիվ մեթոդների համալիր է,որի բաղադրամասերի ճիշտ իրականացման դեպքում լուծվում են նաև կարդալու գործընթացի հետ կապված աշակերտների բազմաբնույթ նպատակները:Այդ բաղադրամասերն են՝գրույցը,բնագրի ընթերցումը,բառային աշխատանքը ,պատմելը և ամփոփումը:Անհրաժեշտ է այս բաղադրամասերի հաջորդականությունը պահպանել, քանի որ դրանցից յուրաքանչյուրը նախապատրաստում է հաջորդին:Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակն է ձևավորել տեղեկատվությունը մշակող,իմաստավորող և օգտագործող անհատ: Նախատեսված արդյունքին հասնելու համար ուսուցիչը ըստ անհրաժեշտության դասընթացում պետք է ներառի բազմաբնույթ մեթոդական հնարներ, որոնք կտանեն երեխաների մեջ ընթերցանության հանդեպ հետաքրքրության առաջացմանն ու խթանմանը:Ընթերցանությունը մարդու մտավոր զարգացման, առաջընթացի հիմնական նախապայմաններից մեկն է:Հետազոտության նպատակն է՝պարզել, թե ինչ մեթոդների համադրությամբ կարելի է խթանել աշակերտների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:Ներածության մեջ նշված խնդիրների լուծմանը չեմ հասել: Ժամանակահատվածը կարճ էր նախանշված եզրակացության իրագործման և ավելի մեծ արդյունք ակնկալելու համար:Բայց հետագայում՝ վերապատրաստման ժամանակ ստացած իմ գիտելիքների օգտագործմամբ կշարունակեմ աշխատանքներս մշակել,արդիականացնել «ավելի շատ նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ և ՏՀՏ-ի գործիքներ օգտագործեմ»,ապա ես կհանգեմ այլ եզրակացության:

Գրականություն

Johnson,D,Johnson,R(1999)Learningtogetherand alone:cooperative,competitive,andindividualisticlearningBoston:Ally nandBacon

Աղբյուրներ

CooperativeLearninghttps://enwikipediaorg/wiki/Cooperative_learning

https://hywikipediaorg/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4

Clickhttps://libraryfesde/pdf-files/bueros/georgien/16023pdf

«Մայրենի տարրական ուսուցման մեթոդիկան» Երևան **2015**

Տեր-Գրիգորյան Ս«Հայոց լեզվի մեթոդիկա»Երևան**1980**

Դասի պլանի **1**

(Գիտելիքների ամրապնդման, կարողությունների, հմտությունների ձևավորման դաս)

Առարկա՝Մայրենի

Դասարան՝ 2-րդ

Դասի թեման՝Երևան

Դասի տիպը՝Գիտելիքների ամրապնդման, կարողությունների, հմտությունների ձևավորման դաս (2-րդ դասաժամ)

Դասի նպատակները՝Գիտելիք

• Ընդլայնել հայրենիքի ուշադրությունը գրավող աշխարհի մասին գիտելիքները

• Հարստացնել բառապաշարը

• Զարգացնել որոշ պատկերացումներ հայ ժողովրդի պատմության, մշակույթի վերաբերյալ

Կարողություն

• Ձևավորել անսովոր իրավիճակներում և առաջադրանքներում կողմնորոշվելուունակություն ստանդարտ լուծումներ տալուկարողություններ

• Ձևավորել հարցեր տալուկարողություն

• Զարգացնել դերերով կարդալուկարողությունը

• Ձևավորել ժամանակի ճանաչման մեջ կատարված փոփոխությունները տեսնելուուգնահատելուկարողություններ

Վերաբերմունք

Ձևավորել հոգատար վերաբերմունք հայրենիքի նկատմամբ

Արժեք

Խրախուսել ախթանել հայրենիքի նկատմամբ սերը

Դասի վերջնարդյունքները՝

• Դերերով ընթերցի տեքստը՝համապատասխան արտահայտչական միջոցներով և հույզերով

• Սովորի «Աչքի առաջ» բառերը՝օգտագործելով բառակապակցությունների և նախադասությունների մեջ

• Սովորի հարցեր տալ, ձևակերպի հարցեր առաջադրված պատասխանների համար

• Ճանաչի Երևանի դրոշը, զինանշանը, օրհներգը

• Ամրապնդի է-ե ուղղագրության իմացությունը

184

• Գնահատի դասի ընթացքում իր ձեռքբերումները

Կապը ՀՊՁտարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

• S1, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S22, S23, S25

Խաչվող հասկացություններ

• Ժամանակ և տարածություն

Ուսուցման ոճեր՝

1 Վիզուալ (տեսողական)

Դիտում է դասագրքի տեքստը, պատկերները, նկարագարդումները:

2 Աուդիալ (լսողական)

Լսում է ընկերների, ուսուցչի խոսքը, Երևանի օրհներգը

3 Կինեսթետիկ

Բացում է դասագրքի QR կոդը՝կատարելով տրված առաջադրանքները, կատարում է գրավոր առաջադրանքները:

ԿԱՊԿՈՒ սովորողների աշխատանքները

Նվազագույն

• Ունկնդրել Երևանի հիմնը (QR կոդ)

• Գունազարդել Երևանի դրոշը

Դիտել նկարազարդումները

Առավելագույն

Արտագրել «Էրեբունի» բանաստեղծությունը կամ հատված այդ բանաստեղծությունից:

Ուսումնադիտողական պարագաներ, տեխնիկական միջոցներ, էլեկտրոնային ռեսուրսներ

• «Մուտքի» քարտեր

• «Ելքի» քարտեր

• « T- ձև» աղյուսակ

• Ինքնակպչուն թղթեր

• Երևանի դրոշի, զինանշանի նկարներ

• Երևանի օրհներգի ձայնասկավառակ

Ուսումնական գործունեության ձևեր (ուսուցման ևգնահատման մեթոդներ, ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևեր)

• Դերերով ընթերցանության մեթոդ

• «Կմախք» մեթոդ

• Գործնական մեթոդներ՝գրավոր աշխատանք, աղյուսակի լխաչբառի լրացում

• Ձևավորող գնահատման հնար՝ «Մուտքի քարտեր», «Ելքի քարտեր»

• Անհատական ուզույգային աշխատանքներ

Ներառարկայական կապերը

• Հայկ Նահապետն ուփոքրիկ Արմենը (2-րդ դաս)

Միջառարկայական կապերը

• Կերպարվեստ

(Երևանի տեսարժան վայրերի նկարներ)

• Երաժշտություն

(«Երևանի օրհներգի» ունկնդրում)

Դասի ընթացքը (փուլերը, տևողությունը, ընտրված մեթոդները)

1 Ներածություն (3-5 րոպե)

Հնար՝ «Մուտքի քարտեր»

2 Հիմնական մաս (23-25 րոպե)

Դերերով ընթերցանություն՝կարդալու որակական հատկանիշները

զարգացնելունպատակով

Բառային աշխատանք

Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

3 Դասի ամփոփում ևանդրադարձ (10րոպե)

«Կմախք» մեթոդ

4 Գնահատում (5 րոպե)

Հնար՝ «Ելքիքարտեր»

5 Տնային աշխատանքի հանձնարարում (1 րոպե)

Դասի պլան**2**

(Հաղորդման դաս)

ԱՌԱՐԿԱՆ – Մայրենի		
Դասարանը – 2-րդ	Ուստարի – 2022-2023	Կիսամյակը- 2րդ
Թեման	Էլմերը: Ինչպես դառնալ փղագույն	
Դասի տիպը	Հաղորդման դաս (նոր փաստերի ու երևույթների հետ ծանոթացման դաս)	
Դասի տևողությունը	45 րոպե	
Դասի նպատակը	• Խորացնել կարդալու կարողությունները• ամրակայել հաղորդակցական և համագործակցայինկարողությունները• զարգացնել հոգեկան գործընթացները	
Վերջնարդյունքները	• հասկանալով ընթերցի տեքստը• պատասխանի առաջադրված հարցերին• նկարագրի փղերի ընտանիքը• մասնակցի խմբային աշխատանքի՝ պահպանելով խմբումաշխատելու կանոնները	

Ընդհանրական խաչվող հասկացություն ները	Պատճառ և հետևանք
Կարողունակություններ	1 Լեզվական գրագիտություն և կարողունակություն 2 Սովորել, սովորելու կարողունակություն
Միջառարկայական կապ	Կերպարվեստ
Կապը ՀՊՁ-Ի հետ	S1, S7, S9, S16, S18 ,S22
Ուսուցման մեթոդներ	Զրույց, քննարկում, դադարներով ընթերցանություն, խմբային աշխատանք, զույգով քննարկում
Դասի փուլերը	Ուսուցչի գործունեություն
Դասի սկիզբ՝	Աշակերտներին բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ նախադասությունների շերտիկը (3 նախադասություն) և ներկելու իրենց մասը:Ուղղորդել աշակերտներին նկարի մասերը փակցնել պաստառին:

Դասի ընթացք՝	Կազմակերպել զույգերով քննարկում	Հանձնարարել զույգերով քննարկում են առաջադրված	«Հետաքրքիր է, գույնզգույն փիղ լինո՞ւմ է» Ինչպիսի՞ն էր փղերի ընտանիքը:

	դասագրքի էջի հարցի շուրջ:Հանձնարարել կարդալ մուտքի պատուհանիկի քառատողը:Հատված աբար ընթերցել տեքստը, աշակերտներին ուղղել հարցեր:	հարցը, ազատ արտահայտում են իրենց մտքե- րը: Բացում են դասագիրքը, կարդում են մուտքի պատու- հանիկը:Հետևել տեքստի ընթերցանու- թյանը, պատաս- խանել յուրաքանչյուր հատվածից հետո առաջադրված հարցերին:	Ինչպիսի՞ փղեր էին ապրում այդ ընտանիքում: Ինչո՞վ էր Էլմերը տարբերվում մյուս փղերից: Ինչո՞ւ էր փղերի ընտանիքը երջանիկ: Ինչո՞ւ Էլմերը որոշեց հեռանալ: Ինչպե՞ս էին ողջունում ջունգլիի կենդանիները Էլմերին: Ինչո՞ւ:Ինչպե՞ս Էլմերը դարձավ փղագույն:

	Հանձնարարել սովորողներին ընթերցել տեքստը:	Սովորողները, շարունակելով միմյանց, ընթերցում են տեքստը:	

Ավարտ	Կատարել ձևավորող գնահատում՝ սովորողներին տալով «Ելքի քարտեր»։Հանձնարարել տնային աշխատանք։	Ավարտի՛ր նախադասությունները Ի՞նչը քեզ զարմացրեց։ Ի՞նչը քեզ ուրախացրեց։ Ի՞նչը քեզ անհանգստացրեց։ Սովորել տեքստը վարժ կարդալ։	
Ուսուցչի անդրադարձը դասին	Դասը հագեցած էր, ընդհանուր առմամբ հաջողված։ Աշակերտները հանձնարարությունները կատարում էին սիրով և		

	ոգևորված, մտքերն արտահայտում էին ազատ ու անկաշկանդ, հետևում էին ընկերոջ ընթերցանությանը		